Կենցաղային կարիքների համար բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ)

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N ________

« _____ » ____________ 200 __ թ

____
պայմանագրի կնքման վայրը

Գազամատակարարող կազմակերպությունը՝

____
(անվանումը, հարկային դասիչը)

____
(մասնաճյուղի անվանումը)

ի դեմս ______________________________
(անուն, ազգանուն, պաշտոն),

որը գործում է ______________________________ հիման վրա, մի կողմից,
(գործունեությունը կարգավորող փաստաթղթի անվանումը)

Փոստային ցուցիչը և հասցեն ______________________________

Հեռախոսահամարները ______________________________

Բանկի անվանումը և հաշվեհամարը ______________________________

և Բաժանորդը՝ ______________________________ , մյուս կողմից,
(անուն, ազգանուն)

Փոստային ցուցիչը և հասցեն ______________________________

Հաշվառման քարտի համարը ______________________________

Հեռախոսահամարները ______________________________

Անձնագրի տվյալները ______________________________

համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրի առարկան գազամատակարարող կազմակերպության (այսուհետև՝ **Մատակարար**) կողմից **Բաժանորդին** կենցաղային կարիքների համար բնական գազի մատակարարումն է:

1.2. **Մատակարարը** պարտավորվում է **Բաժանորդին** մատակարարել անհրաժեշտ քանակի բնական գազ, իսկ **Բաժանորդը**՝ վճարել սպառված գազի դիմաց **պայմանագրով** սահմանված կարգով:

2. Կողմերի պարտավորությունները

2.1. **Մատակարարի** և **Բաժանորդի** փոխհարաբերությունները կարգավորվում են պայմանագրով, բնական գազից օգտվելու կանոններով (ԳՕԿ), ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

2.2. **Մատակարարը** պարտավորվում է.

2.2.1. Ապահովել **Բաժանորդի** հուսալի գազամատակարարումը՝ տեխնիկական նորմերին և ստանդարտներին համապատասխանող որակի և անհրաժեշտ քանակի բնական գազով:

2.2.2. Գազամատակարարման ընդհատման դեպքում այն վերականգնել պայմանագրով և ԳՕԿ-ով սահմանված ժամանակահատվածում:

2.2.3. **Բաժանորդի** պահանջով ԳՕԿ-ով սահմանված ժամկետում պարզաբանել բնական գազի ծախսի ու արժեքի հաշվարկված մեծությունների ճշտությունը:

2.2.4. Ապահովել գազահաշվիչի ցուցմունքների տեսանելիությունը:

2.2.5. **Բաժանորդին** ծանոթացնել Կողմերի՝ ԳՕԿ-ով սահմանված գազամատակարարման պայմաններին և պատասխանատվությանը, նրա հետ անցկացնել կենցաղում բնական գազից օգտվելու անվտանգության կանոնների սկզբնական և պարբերական հրահանգավորում (հավելված № 1):

2.2.6. Ապահովել իր պատասխանատվության տակ գտնվող գազամատակարարման համակարգի ամբողջական և անկորուստ պահպանումը՝ ներառյալ գազահաշվիչի կապարակնիքները, այդ թվում **Բաժանորդի** կողմից դրված կապարակնիքները (հատուկ նշումները):

2.2.7. Գազամատակարարման դադարեցման դեպքում սահմանված կարգով նախապես այդ մասին զգուշացնել **Բաժանորդին**: Վթարի և վթարի կանխարգելման պատճառով գազամատակարարման դադարեցման դեպքերում **Բաժանորդին** հայտնել դադարեցման պատճառների և վերականգնման կանխատեսվող ժամանակի մասին:

2.2.8. Ընդհատված գազամատակարարման վերականգնման դեպքում լրատվության և (կամ) այլ միջոցներով **Բաժանորդին** զգուշացնել գազամատակարարման սկսման ճշգրիտ ժամանակի մասին:

2.3. **Բաժանորդը** պարտավորվում է.

2.3.1. Վճարել յուրաքանչյուր ամսվա ընթացքում փաստացի սպառած գազի դիմաց՝ պայմանագրով սահմանված կարգով:

2.3.2. Առանց **Մատակարարի** թույլտվության և ստուգման չփոխարինել նախագծով և ընդունման ակտով նախատեսված գազասպառիչ սարքերը, չտեղադրել նոր սարքեր, չկատարել ինքնակամ միացումներ ներտնային համակարգին:

2.3.3. Չկատարել միացումներ գազամատակարարման համակարգին (գազահաշվիչից առաջ):

2.3.4. Չխախտել գազահաշվիչի և նրա կապարակնիքների ամբողջականությունը:

2.3.5. Ապահովել **Մատակարարի** վկայագիր ներկայացնող աշխատակիցների (ներկայացուցիչների) ազատ մոտեցումը գազահաշվիչներին, իսկ հրահանգավորման ժամանակ՝ գազի ներտնային համակարգին՝ նախագծին և տեխնիկական պայմաններին դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով:

2.3.6. Ապահովել ծխատարների և (կամ) օդատարների մաքրությունը և դրանց վկայագրումը:

2.3.7. Ներտնային գազասարքավորումներից և (կամ) գազի խողովակներից գազի արտահոսք հայտնաբերելու դեպքում անմիջապես դադարեցնել գազի օգտագործումը և հայտնել գազի վթարային ծառայություն:

2.3.8. Ապահովել իր սեփականությունը հանդիսացող կամ իր տնօրինության տակ գտնվող տարածքով անցնող **Մատակարարի** գազախողովակների, գազահաշվիչների, կապարակնիքների և դրանք կրող շինարարական կառուցվածքների ամբողջականությունը, իր տարածքում չկատարել այնպիսի վերակառուցման աշխատանքներ, որոնք խախտում են գազախողովակների անցկացման նախագծով նախատեսված պայմանները: Գազի համակարգի ամբողջականության պահպանման համար **Բաժանորդի** և **Մատակարարի** պատասխանատվության տարանջատման կետը նշված է №2 հավելվածում:

2.3.9. Բնակարանը վաճառելու (փոխանակելու կամ այլ ձևով օտարելու, որը հանգեցնում է բնակարանի սեփականատիրոջ փոփոխության) դեպքում դիմել **Մատակարարին**՝ վերջնահաշվարկ կատարելու, պայմանագիրը լուծելու և բնակարանի

գազամատակարարումը դադարեցնելու համար, ինչի մասին **Մատակարարը** տեղեկանք է տալիս **Բաժանորդին**:

3. Ծախսված բնական գազի հաշվառումը

3.1. **Բաժանորդի** կողմից ծախսված բնական գազի հաշվառումը կատարվում է գազի ներտնային համակարգի մուտքի վրա տեղադրված գազահաշվիչի միջոցով, որի տեխնիկական տվյալները գրանցվում են պայմանագրի №1 հավելվածում (ակտ՝ գազահաշվիչի տեղադրման (փոխարինման) մասին): Գազահաշվիչի փոխարինման դեպքում կազմվում է երկկողմանի ստորագրված նոր ակտ և կցվում պայմանագրին:

4. Սպասարկման պայմանները

4.1. **Բաժանորդին** մատակարարվող բնական գազի որակական ցուցանիշները պետք է համապատասխանեն «Բնական վառելանյութային գազեր արդյունաբերության և կոմունալ-կենցաղային նպատակների համար» ԳՈՍՏ 5542-82-ով սահմանված պայմաններին: Համաձայն նշված ԳՈՍՏ-ի՝ գազի ստորին տեսակարար ջերմարարությունը (կալորիականությունը) չպետք է ցածր լինի 31.8 ՄՋ/նխմ (7600 կկալ/նխմ-ից):

4.2. **Մատակարարի** սեփականությունը հանդիսացող (տնօրինման տակ գտնվող) գազամատակարարման համակարգի և **Բաժանորդի** սեփականությունը հանդիսացող (տնօրինման տակ գտնվող) գազի ներտնային համակարգի սահմանազատման կետը անմիջապես գազահաշվիչից հետո տեղադրված փականն է (հավելված № 2):

4.3. Գազամատակարարման համակարգը (այդ թվում՝ գազահաշվիչը) սպասարկում և շահագործում է **Մատակարարը**՝ իր միջոցներով:

Գազի սպառման ներտնային համակարգը, սկսած սահմանազատման կետից, շահագործում է **Բաժանորդը՝** անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմամբ: Այդ համակարգի սպասարկման և անհրաժեշտ վերանորոգման աշխատանքները կատարվում են **Բաժանորդի** հաշվին՝ համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից, պայմանագրային հիմունքներով:

4.4. Կապարակնիքների և (կամ) գազահաշվիչի փոխարինման հետ կապված ցանկացած գործողություն իրավասու և պարտավոր է կատարել միայն **Մատակարարը՝ Բաժանորդի** կամ նրա լիազոր ներկայացուցչի ներկայությամբ: Նոր կապարակնիքներ դնելու դեպքում հաշվիչի տեղադրման (փոխարինման) ակտում պարտադիր նշումներ են կատարվում (հավելված № 3):

4.5. **Բաժանորդն** իրավունք ունի պահանջել իր կամ իր կողմից լիազորված անձի մասնակցությունը գազահաշվիչի լաբորատոր ստուգաչափումներին:

4.6. Տեղում գազահաշվիչի զննումը կամ ստուգումը կարող է կատարվել ինչպես **Մատակարարի**, այնպես և **Բաժանորդի** նախաձեռնությամբ՝ համատեղ ներկայությամբ: Անհրաժեշտության դեպքում **Մատակարարը** կարող է գազահաշվիչը տեղում ստուգել վերահսկող գազահաշվիչով շարժական ստենդի միջոցով: Եթե ստուգաչափման արդյունքում պարզվի, որ գազահաշվիչի և վերահսկող գազահաշվիչի ցուցմունքների տարբերությունը նոմինալ ծախսի դեպքում գերազանցում է ± 3%-ը, ապա գազահաշվիչը համարվում է անսարք և ուղարկվում վերանորոգման ու պետստուգաչափման:

4.7. Ստուգման արդյունքում գազահաշվիչի անսարքությունը հաստատվելու դեպքում ստուգաչափման ծախսերը կատարում է **Մատակարարը**, հակառակ դեպքում՝ **Բաժանորդը**, եթե նա է ստուգման նախաձեռնողը:

4.8. **Բաժանորդն** իրավունքի ունի **Մատակարարից** տեղեկատվություն ստանալ մատակարարված բնական գազի որակական ցուցանիշների վերաբերյալ:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում պայմանագրով, ԳՕԿ-ով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2. Եթե Կողմերից մեկը պայմանագրի առնչությամբ կատարել է այնպիսի գործողություն, որով մյուս կողմին վնաս է պատճառել, ապա պարտավոր է հասցված վնասը փոխհատուցել օրենքով սահմանված կարգով:

5.3. **Մատակարարը** պատասխանատվություն է կրում.

ա) պայմանագրի 2.2.1 կետի խախտման համար՝ ԳՕԿ-ով սահմանված կարգով.
բ) գազահաշվիչների բնականոն աշխատանքի, պարբերաբար դրանց սպասարկման և տեխնիկական վիճակի համար:

5.4. **Բաժանորդը** պատասխանատվություն է կրում.

պայմանագրի 2.3.3 կետի խախտման, ինչպես նաև 2.3.4 կետի այնպիսի խախտումների դեպքում, որոնք միտված են փաստացի սպառված գազի հաշվառման նվազեցմանը: Նշված խախտումների հայտնաբերման դեպքում կազմվում է երկկողմանի ակտ, որը հիմք ընդունելով՝ **Մատակարարը** դադարեցնում է **Բաժանորդի** գազամատակարարումը և ԳՕԿ-ով սահմանված կարգով վերահաշվարկում **Բաժանորդի** ծախսած բնական գազի քանակը:

Բաժանորդի գազամատակարարումը վերականգնվում է **Մատակարարի** վնասը (վերահաշվարկված գազի արժեքը, գազամատակարարման վերականգնման հետ կապված ծախսերը և (կամ) գազահաշվիչի փոխարինման (նորոգման) ծախսերը) ամբողջությամբ փոխհատուցելուց կամ **Մատակարարի** համար ընդունելի պայմաններով Կողմերի ստորագրությամբ վնասի փոխհատուցման պայմանագիր և ժամանակացույց կազմելուց հետո:

6. Վճարումները

6.1. Մատակարարվող բնական գազի առավելագույն սակագինը սահմանում է ՀՀ էներգետիկայի հանձնաժողովը՝ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Պայմանագրի կնքման պահին այն կազմում է _____ դրամ՝ մեկ նխմ-ի համար:

6.2. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից բնական գազի սակագնի փոփոխման դեպքում սահմանված նոր սակագինը ուժի մեջ է մտնում ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի սահմանած ժամկետից:

6.3. Եթե **Մատակարարը** օրենքով սահմանված կարգով բնական գազը մատակարարում է կամ որոշակի ժամկետից սկսած մատակարարելու է առավելագույն սակագնից ցածր սակագնով, ապա այդ մասին պարտավոր է նախօրոք գրավոր ծանուցել **Բաժանորդին**:

6.4. **Բաժանորդը** սպառած գազի համար վճարում է օրենքով, պայմանագրով և ԳՕԿ-ով սահմանված կարգով:

6.5. Գազիֆիկացման կամ գազամատակարարման վերսկսման համար **Բաժանորդի** կողմից կատարված կանխավճարները ենթակա են փոխհատուցման սահմանված կարգով և դրան համապատասխան կնքված պայմանագրով:

6.6. **Մատակարարը** մինչև հաջորդ ամսվա _____ -ը Բաժանորդին է ներկայացնում գազահաշվիչով գրանցված՝ սպառված գազի համար վճարման փաստաթուղթ՝ հաշվարկված գործող սակագներով:

6.7. **Բաժանորդը** գազահաշվիչի ցուցմունքին համապատասխան ներկայացված վճարման փաստաթղթով վճարում է սպառված գազի դիմաց ոչ ուշ, քան մինչև հաջորդ ամսվա_____-ը ընկած ժամանակահատվածում՝ **Մատակարարի** ներկայացրած բանկային հաշվեհամարին:

7. Այլ պայմաններ

7.1. Պայմանագրով չկարգավորված հարցերը և Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, անորոշ ժամկետով և կարող է դադարեցվել կամ լուծվել օրենքով սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական՝ յուրաքանչյուր կողմի համար:

7.4. **Մատակարարը** կարող է ժամանակավորապես դադարեցնել կամ սահմանափակել **Բաժանորդի** գազամատակարարումը, եթե՝

- կատարվում են ծրագրային կամ արտածրագրային (վթարային) կանխարգելիչ-վերանորոգման աշխատանքներ, որոնց տևողության մասին **Մատակարարը** հայտնում է **Բաժանորդին**.
- իրավասու մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով ընդունվել է բնակչության գազամատակարարումը սահմանափակելու կամ դադարեցնելու մասին համապատասխան որոշում.
- առկա են **Բաժանորդի** գազամատակարարումը խոչընդոտող անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հանգամանքներ:

Մատակարարումը վերականգնվում է մատակարարման ընդհատման պատճառները վերանցնելուց (վերանալուց) և մատակարարման վերականգնման մասին **Բաժանորդին** նախապես զգուշացնելուց հետո:

7.5. **Մատակարարը** կարող է նաև դադարեցնել **Բաժանորդի** գազամատակարարումը, եթե՝

- **Բաժանորդը** պայմանագրի 6.4 և 6.7 կետերով սահմանված կարգով վճարումները չի կատարել և եթե ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից սահմանված կարգով **Մատակարարը** տեղեկացրել է **Բաժանորդին** գազամատակարարման դադարեցման մասին.
- **Մատակարարը** կամ հսկողության պետական մարմինների ներկայացուցիչները հայտնաբերել և ակտավորել են **Բաժանորդի** պատասխանատվության տակ գտնվող գազի սպառման համակարգում այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել գազի օգտագործման (մատակարարման) անվտանգության կանոնների խախտման:

Բաժանորդի գազամատակարարումը վերականգնվում է նրա կողմից խախտումները և դրանց հետևանքները վերացնելուց հետո:

7.6. Գազահաշվիչը հանելիս **Մատակարարը** պարտավոր է այն փոխարինել շրջանառու ֆոնդի գազահաշվիչով:

Վերջինիս բացակայության դեպքում **Մատակարարը** կատարում է առանց գազահաշվիչի գազի ժամանակավոր միացում, որի դեպքում սպառված գազի հաշվառումը կատարվում է գազահաշվիչի տեղադրմանը նախորդող վերջին 30 օրերի ընթացքում **Բաժանորդի** օրական միջին գազօգտագործման ծավալներից ելնելով: Առանց գազահաշվիչի գազօգտագործման ժամկետը չպետք է գերազանցի 10 օրը:

7.7. Կողմերից մեկի նախաձեռնությամբ գազահաշվիչի փոխարինումը ավելի թողունակ գազահաշվիչով կատարվում է սահմանված կարգով:

8. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցուցակը

8.1. Հավելված № 1 - կենցաղում բնական գազից օգտվելու անվտանգության կանոնների հրահանգավորման, ստուգման և ներտնային համակարգի տեխնիկական պայմաններին ու նախագծին համապատասխանեցման և ստացման թերթիկ:

8.2. Հավելված № 2 - գազի ներտնային համակարգի և գազամատակարարման համակարգի սահմանազատման, Բաժանորդի և Մատակարարի պատասխանատվության տարանջատման ակտի:

8.3. Հավելված № 3 - գազի առևտրային հաշվիչի տեղադրման (փոխարինման) ակտ:

Մատակարար՝	**Բաժանորդ՝**
_____	_____
(անուն, ազգանուն)	(անուն, ազգանուն)
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված № 1

Բնական գազի մատակարարման
(կենցաղային սպառման) պայմանագրի

Կենցաղում բնական գազից օգտվելու անվտանգության կանոնների հրահանգավորման ստուգման և ներտնային համակարգի տեխնիկական պայմաններին և նախագծին համապատասխանության ստուգման թերթիկ*)

1. **Մատակարար** կազմակերպություն, մասնաճյուղ _____
2. Բաժանորդ _____
(անուն, ազգանուն, հայրանուն, հասցե)

Քարտի համարը _____

3. Անվտանգության հիմնական պահանջներ.
   3.1. Գազի ներտնային համակարգի (սկսած մուտքային փականից) անվտանգ շահագործման համար պատասխանատվություն է կրում Բաժանորդը:

Գազի ներտնային համակարգի սպասարկումը և նորոգումը կատարվում է **Բաժանորդի** հաշվին՝ համապատասխան որակավորման հավաստագիր ունեցող անձի (կազմակերպության) կողմից, պայմանագրային հիմունքներով:

3.2. Գազի ներտնային համակարգից օգտվելու անվտանգության տեխնիկայի կանոնների և գազասարքերի ամբողջական պահպանման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Բաժանորդը, այդ թվում՝

- գազատար խողովակներին ապօրինի միացումներ կատարելու,
- գազահաշվիչի հանգույցի ամբողջականությունը խախտելու,
- նախագծով նախատեսված գազի սարքավորումները տեղափոխելու կամ լրացուցիչ սարքավորումներ ինքնակամ միացնելու,
- գազիֆիկացման նախագծով չնախատեսված, ինքնաշեն, ոչ գործարանային արտադրության, ՀՀ պետստանդարտի կողմից չարտոնագրված սարքերից (այդ թվում՝ ջեռուցման) օգտվելու,
- չարտոնագրված կազմակերպության կամ ֆիզիկական անձի միջոցով **Բաժանորդի** պատասխանատվության տակ գտնվող ներտնային գազահամակարգը նորոգելու, ինչպես նաև տեխնիկական սպասարկման և այլ աշխատանքների կատարելու,
- ծխաօդատար ուղիների, այդ թվում՝ թիթեղյա խողովակներով միացումների տեխնիկական ստուգման ժամկետանց ակտով և (կամ) անսարք վիճակում շահագործելու համար:

---

*) *հրահանգավորումը — զննումներն իրականացվում են ոչ ուշ, քան տարին մեկ անգամ*

3.3. Գազամատակարարման և (կամ) գազի ներտնային համակարգում գազի արտահոսքի հայտնաբերման կամ վթարների դեպքերում դադարեցնել գազի սպառումը, չօգտվել բաց կրակից և անհապաղ տեղեկացնել գազի վթարային ծառայությանը՝ _____

հեռախոս, հասցե

3.4. Գազասարքերից օգտվելուց առաջ ստուգել ծխաօդատար ուղիների աշխատանքը, անսարքություն հայտնաբերելու դեպքում չօգտվել գազասարքերից և անհապաղ դիմել տարածքային կամավոր հրշեջ ընկերություն:

4. Մինչ գազամատակարարման իրականացումը (գազամատակարարման վերականգնումը) **Մատակարարի** ներկայացուցչի կողմից ստուգվել է գազի ներտնային համակարգի համապատասխանությունը տեխնիկական պայմաններին, նախագծին և անվտանգության կանոններին: Թերություններ և խախտումներ չեն հայտնաբերվել:

_____

(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

Հրահանգավորում ստացող **Բաժանորդ**	Հրահանգավորեց
_____	_____
(անուն,հայրանուն, ազգանուն)	(անուն, հայրանուն, ազգանուն)
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

Բաժանորդի հրահանգավորումների և գազի ներտնային համակարգի ստուգման գրանցումները

Ամիս ամսաթիվ	Հրահանգավորող և ստուգող անձ		Հրահանգավորման և ստուգման նպատակը, արդյունքները*	Բաժանորդ	
	Անուն, հայրանուն, ազգանուն, պաշտոն	Ստորագ-ություն		Անուն, հայրանուն, ազգանուն	Ստորագ-ություն

- *Գազամատակարարի ներկայացուցչի կողմից ստուգվում է գազի ներտնային համակարգի,* ***Բաժանորդի*** *գազահաշվիչի ամբողջականությունը, նրա պատասխանատվության տակ գտնվող գազամատակարարման համակարգի համապատասխանությունը տեխնիկական պայմաններին, նախագծին և անվտանգության կանոններին:*

Հավելված № 2

Բնական գազի մատակարարման
(կենցաղային սպառման) պայմանագրի

Գազի ներտնային համակարգի և գազամատակարարման համակարգի սահմանազատման, **Բաժանորդի** և **Մատակարարի** պատասխանատվության տարանջատման կետ

1. **Մատակարար** կազմակերպություն, մասնաճյուղ _____

2. Հասցե _____

3. Բաժանորդ _____
(անուն, ազգանուն, հայրանուն, հասցե)

Քարտի համարը _____

4. Բաժանորդի գազի ներտնային համակարգի սխեման հատակագծի վրա

Սխեմայում օգտագործված պայմանական նշանները

—	Գազատար խողովակ	◑	Գազի ջրատաքացուցիչ
⋈	Մուտքային փական	⊠	Ջեռուցման կաթսա
⊗	Սահմանազատման կետ ըստ պայմանագրի 4.2 հոդվածի	⊠	Ջեռուցման վառարան
⊕	Պատասխանատվության տարանջատման կետ, ըստ	◕	Ծխատար
⊠	Գազի առևտրային հաշվիչ	○	Օդատար
⊘	Գազօջախ	◢	Օդանցք

5. Բաժանորդի գազասպառման տեղակայանքների բնութագիրը

№/№ ըստ **4 կետի** սխեմայի	Անվանումը	Մակնիշը	Գործարա-նային №	Տեխնիկա-կան բնութագիրը	Տեղադր-ման ժա-մանակը

6. Բաժանորդի գազամատակարարման նախագիծը կազմվել է _____

_____
(նախագծող կազմակերպությունը, նախագծի N, նախագծման ժամանակը)

7. Գազի ներտնային համակարգը ստուգված և փորձարկված է, այն համապատասխանում է անվտանգության տեխնիկայի և գազի սարքավորման պահանջներին:

8. Գազի ներտնային համակարգի վերափոխման, նոր սարքերի տեղադրման, գործող սարքերի փոխարինման դեպքում սույն փաստաթուղթը ենթակա է վերակնքման:

Մատակարար՝	**Բաժանորդ՝**
_____	_____
(անուն, հայրանուն, ազգանուն, պաշտոնը)	(անուն,հայրանուն, ազգանուն)
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված № 3

Բնական գազի մատակարարման
(կենցաղային սպառման) պայմանագրի

Գազի ներտնային առևտրային հաշվիչի տեղադրման (փոխարինման) ակտ

(կազմվում է երկու օրինակից)

1. **Մատակարար** կազմակերպություն, մասնաճյուղ _____

2. Հասցեն _____

3. Բաժանորդ _____

(անուն, ազգանուն, հայրանուն, հասցե)

Հասցեն _____

Քարտի համարը _____

4. Գազահաշվիչի տեղադրման (փոխարինման) հիմքը _____

_____

(Նոր **Բաժանորդ**,պլանային փոխարինում, արտապլանային փոխարինում, հանձնարարության №)

5. Տեղադրման (փոխարինման) հանձնարարություն տվող անձը _____

_____

(անուն, հայրանուն, ազգանուն, պաշտոն, ամիս, ամսաթիվ)

6. Տեղադրում (փոխարինում) կատարող պատասխանատու անձը _____

_____

(անուն, հայրանուն, ազգանուն, պաշտոն)

7. Գազահաշվիչի տվյալները

Հաշվիչի տվյալներ	Փոխարին-վող հաշվիչ	Նոր տեղադրվող հաշվիչ	Կապարակնիք-ների ամբող-ջականություն
Գազհաշվիչի մակնիշը, գործարանա-յին №, թողարկման տարեթիվը			
Ստուգաչափող կազմակերպությունը, ստուգաչափման ժամկետը			
Հաջորդ պլանային ստուգաչափման ժամկետը			
Գազահաշվիչի տեղադրման տեղը և պայմանները			
Մատակարարի և ստուգաչափողի կողմից գազահաշվիչի վրա տեղադրված կապակնիքը			
Բաժանորդի կողմից գազահաշվիչի վրա տեղադրված կնիքները (հատուկ նշումներ)			
Գազահաշվիչի աշխատանքի փորձար-կումը տեղադրումից հետո			

8. Հանված գազահաշվիչի տեխնիկական վիճակի նկարագրությունը _____

_____

_____

9. Նախատեսվում է (չի նախատեսվում) հանված գազահաշվիչի ստուգաչափում՝

Բաժանորդի ներկայությամբ _____

ամիս ամսաթիվ, հասցե

_____

10. Գազահաշվիչի փոխարինման ժամանակ Բաժանորդի գազի ներտնային համակարգի զննման արդյունքները _____

_____

11. Փոխարինման և կապարակնքման աշխատանքները կատարվել են Բաժանորդի (նրա ներկայացուցչի) մասնակցությամբ “____”_____ 200__թ.

Մատակարար՝	**Բաժանորդ՝**
_____	_____
(անուն, հայրանուն, ազգանուն, պաշտոնը)	(անուն,հայրանուն, ազգանուն)
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

Նշումներ կապարակնիքի փոխարինման մասին

_____ (

_____ (

_____ (

_____ (